ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 55

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 07-ի «Պտղնի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 10-ի N 43-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 24-Ն որոշումը պաշտոնական հրապարակել 2019 թվականի հունիսի 20-ին:
2. Պաշտոնական հրապարակումն իրականացնել համայնքի տարբեր հատվածներում ցուցատախտակներին փակցնելու միջոցով:
3. Պաշտոնական հրապարակման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղարի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. հունիսի 19
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 54

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով ԱՁ «ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» կողմից ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ» ԱՁ-ին տալ Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 թիվ 1 հասցեում գտնվող «Աղբյուր» հացատանը ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի, իրացման, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 15.06.2019թ. մինչև 30.09.2019թ. ժամանակահատվածի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

19-Jun-19

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. հունիսի 19
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 56

ԷԴՈՒԱՐԴ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Էդուարդ Երվանդի Գասպարյանի դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Էդուարդ Երվանդի Գասպարյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգեզանգված 4-րդ թաղամաս թիվ 7 հասցեում գտնվող 0.05 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի համար (սեփականության վկայական N 13052019-07-0060, ծածկագիր 07-054-0113-0011) արտաքին ջրագծի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Էդուարդ Երվանդի Գասպարյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈՒՆԻՍԻ 2019թվականի N 57

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Հմայակ Անուշավանի Սիմոնյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0122-0005) 1987 թվականին ինքնակամ կառուցված շինությունը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինության և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Հմայակ Անուշավանի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1987 թվականին ինքնակամ կառուցվել է 71.4 քմ մակերեսով կիսանկուղ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինության և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հմայակ Անուշավանի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 9 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունը կառուցված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չի քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Հմայակ Անուշավանի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 71.4 քմ մակերեսով կիսանկուղը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունը կառուցվել է մինչև 2001

թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2019 թ. հունիսի 28
գ.Պտղնի

2019 թ. հունիսի 28
գ.Պտղնի